ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

«11» օգոստոսի 2000թ.

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս գործադիր տնօրեն Սուսաննա Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տիգրան Մեծ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ «Կապալառու», ի դեմս տնօրեն Վրեժ Մարկոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր» պարբերականների, ինչպես նաև Պատվիրատուի կողմից կատարվող այլ նյութերի տպագրությունը, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա համար:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1. Կապալառուն աշխատանքը կատարում է Պատվիրատուի կողմից տրամադրված բնօրինակներին համապատասխան՝ իր ուժերով, նյութերով, սարքավորումներով, գործիքներով և պատասխանատվություն է կրում դրանց որակի համար:

2.2. Աշխատանքի կատարման ժամկետը որոշվում է յուրաքանչյուր հրատարակության համար առանձին փոխադարձ համաձայնությամբ:

2.3. Աշխատանքը համարվում է կատարված Կապալառուի կողմից համապատասխան քարկուլյացիայի ներկայացման և Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան ելքի ֆակտուրան կամ հանձման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի

3.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կատարած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

3.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու՝ 5 օրյա ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար և, եթե այդ ժամկետում Կապալառուն չի վերացնում թերությունները, հրաժարվել կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացնելը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները.

2.1.4. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

2.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածում սահմանված երաշխիքային ժամկետում.

2.1.6. առանց կատարված աշխատանքը վարձատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

2.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր հայեցությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) 5 օրյա ժամկետում անհատույց վերացնելու թերությունները.

բ) համաչափորեն նվազեցնելու աշխատանքի համար սահմանված գինը.

գ) հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

2.1.8. աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում, դրանում Պատվիրատուի և այլ անձանց շահերին վնաս սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով աջակցել Կապալառուին աշխատանքները կատարելիս.

2.2.2. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ ընդունել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից՝ աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.3. Աշխատանքն ընդունելուց հետո, Աշխատանքի արդյունքում պայմանագրից այնպիսի շեղումներ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում, որոնք չէին կարող հայտնաբերվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ), ներառյալ՝ այնպիսիք, որոնք Կապալառուն թույլ է տվել դիտավորյալ, դրանք հայտնաբերելուց հետո՝ 5 օրյա ժամկետում, այդ մասին հայտնել Կապալառուին:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. կատարված աշխատանքի արդյունքն ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խոսափելու դեպքում Պատվիրատուին գրավոր զգուշացնել և զգուշացման օրվանից երկու ամիս անց վաճառել աշխատանքի արդյունքը, իսկ ստացված գումարը, իրեն հասանելիք վճարները պահելուց հետո, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 266 հոդվածով սահմանված կարգով մուծել նոտարի կամ դատարանի դեպոզիտ:

Կապալառուն պարտավոր է

3.1. Մինչև սույն պայմանագիրը կնքելը՝ պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկություններ տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների և առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև պատվիրատուի ցանկությամբ նրան հետաքրքրող աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ.

3.2. Աշխատանքը կատարել պատշաճ որակով.

3.3. Աշխատանքի արդյունքը հանձնել Պատվիրատուին.

3.4. Աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և պայմանների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և պայմանները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

3.5. Պատվիրատուի պահանջով փոխադարձ պայմանավորվածությամբ սահմանված ժամկետում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, եթե Կապալառուն աշխատանքի կատարման ընթացքում պայմանագրի պայմաններից թույլ է տվել շեղումներ, որոնք վատթարացրել են Աշխատանքի որակը.

3.6. Աշխատանքը կատարել անձամբ:

4. Աշխատանքի գինը և վարձատրությունը

4.1. Աշխատանքի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով (*կցվելված 1, 2*), որը համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707 հոդվածի՝ մոտավոր է:

4.2. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.1. կետով սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո, աշխատանքի ավարտից և համապատասխան կարկուլյացիայի ու հաշիվ ֆակտուրայի ստացումից հետո՝ 1 (մեկ) ամսվա ընթացքում կամ փոխադարձ համաձայնությամբ, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայամանագրի 1.1. կետում նշված աշխատանքի կատարման ժամկետի խախտման համար Կապալառուն Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր օրվա համար գումարի 0,1 տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի 0,1 տոկոսի չափով:

5.2. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են հրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,

քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է Կապալառուն, բացառությամբ այն դեպքերի, երբ փորձաքննությամբ հաստատվում է Կապալառուի գործողությունների և հայտնաբերված թերությունների միջև պատճառահետևանքային կապի բացակայությունը: Նշված դեպքերում փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելուց հետո և գործում է մինչև 11 օգոստոսի 2010թ.:

Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Արշակունյաց 2
Հայէկոնոմբանկի քաղ. վարչ.	Ագրոբանկի «Տիգրան Մեծ» մ/ճ
Հ/հ 163008203131	Հ/հ 142540021110
ՀՎՀՀ 02538276	ՀՎՀՀ 02505322
Գործադիր տնօրեն	Գործադիր տնօրեն
Ս. Գրիգորյան	Վ. Մարկոսյան

...ատ. ՓԲԸ

ՀՀ պաշտոնական տեղեկագրի
տպագրական արժեքը տարբեր քանակի
մամուլների համար

Հավելված 1

Գրքի չափսը 70x108/ 1/16
Թղթի չափսը 62x84/ 1/8
Տպաքանակը մինչև 1000

2000 թ.օգոստոսի 11-ից

Մամուլ	1 մ-ի արժեքը	Գումարը
1	81,9	81900
2	81,9	163800
3	81,9	245700
4	81,9	327600
5	81,9	409500
6	81,9	491400
7	77,8	544908
8	77,8	622752
9	77,8	700596
10	77,8	778440
11	77,8	856284
12	74,9	898200
13	74,9	973050
14	74,9	1047900
15	74,9	1122750
16	74,9	1197600
17	74,9	1272450
18	74,9	1347300
19	74,9	1422150
20	74,9	1497000
21	71,9	1508976
22	71,9	1580832
23	71,9	1652688
24	71,9	1724544
25	71,9	1796400
26	71,9	1868256
27	71,9	1940112
28	71,9	2011968
29	71,9	2083824
30	71,9	2155680

...ն Մեծ» հրատ. ՓԲԸ

...ահր տնօրեն՝ Վ. Մարկոսյան

...նօրեն՝ Լ. Հարոյան

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Ս. Գրիգորյան

Հավելված 2

ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի
տեղեկագիր
տպագրական արժեքը տարբեր քանակի
նամուլների համար

Գրքի չափսը 70x108/ 1/16
Թղթի չափսը 62x84/ 1/8
Տպաքանակը մինչև 800

2000 թ.օգոստոսի 11-ից

Մամուլ	1 մ-ի արժեքը	Գումար
1	68,3	54600
2	68,3	109200
3	68,3	163800
4	68,3	218400
5	68,3	273000
6	68,3	327600
7	64,9	363272
8	64,9	415168
9	64,9	467064
10	64,9	518960
11	64,9	570856
12	62,4	598800
13	62,4	648700
14	62,4	698600
15	62,4	748500
16	62,4	798400
17	62,4	848300
18	62,4	898200
19	62,4	948100
20	62,4	998000
21	59,9	1005984
22	59,9	1053888
23	59,9	1101792
24	59,9	1149696
25	59,9	1197600
26	59,9	1245504
27	59,9	1293408
28	59,9	1341312
29	59,9	1389216
30	59,9	1437120

Մեծ» հրատ. ՓԲԸ

տնօրեն՝ Վ. Մարկոսյան

տնօրեն՝ Լ. Հարոյան

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Ս. Գրիգորյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՕԳՈՍՏՈՍԻ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«08» ապրիլի 2010թ.

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Սուսաննա Գրիգորյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Տիգրան Մեծ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ «Կապալառու», ի դեմս տնօրեն Վրեժ Մարկոսյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.1. Պայմանագրի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8. «Սույն Պայմանագիրը գործում է մինչև 2020 թվականի օգոստոսի 11-ը»:

1.2. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է 11.08.2000թ. կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կապալառու
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Արշակունյաց 2
հեռ. 52-01-28	հեռ. 52-17-75
Հ/հ 241002068948	Հ/հ 24100100555200
«Յունիբանկ» ՓԲԸ	«Յունիբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02538276	ՀՎՀՀ 23 - 02505322

Տնօրեն Ս. Գրիգորյան

Կ.Տ.

Տնօրեն Վ. Մարկոսյան

Կ.Տ.